

ժովն յառաջակայք էին, չեռուն թոյլ դասերոյ այլ թիկունս եղեն նմա եւ օգնեցին նորս չարութեանն թե՛ սեր հրահանաւն ե զնացեր» (Ն՞յ՞, էջ 113):

Նշանակելի է որ Դարանաղցի յատկապէս կը շեշտէ թէ «յայնմ ժամանակի ոչ ոք կայր 'ի վարդապետաց յԼսսանկօր»։ ուրեմն Կ. Պոլսոյ պատրիարքական աթոռն ալ թափուր էր (Ն՞յ՞, էջ 114):

Սիմէոն դպիր Լեհացիի յիշած 4-5 վարդապետները և երեք եպիսկոպոսները արդեօք այդ թուականին ամէնքն ալ հոտ թափեցա՞ն: Ասիկա շահեկան խնդիր մըն է:

Դարանաղցի այնպէս մը ցոյց կու տայ թէ ուրիշ վարդապետ չըլլալուն համար տեղակալներուն դէմ ուրիշ գանգատ ունեցողներ իրեն օձիքէն բռնած էին ու պահանջած՝ որ դատաստան ընէ:

Գրիգոր Դարանաղցի կը հաւաքէ «զամենայն եկեղեցոյ ֆահանայք եւ եկեղեցականներն» որպէսզի քննութիւն ընէ և ապա յանդիմանէ անոնց «չարչարիչ»ը, սակայն գանգատողները չեն գար՝ վախնալով տեղակալներու վրէժխնդրութենէն (Ն՞յ՞, էջ 115):

Յետոյ Դարանաղցին կը փնտռէ Նազազ Ղազար քահանան: «Հարցուկ եղի, թե ո՞ւր ե, սասցին թե ի Կեսարիա դրկեցին վեֆիղնին՝ զնե՛ծ Գրիգոր վարդապետն ի քերէզ (Ն՞յ՞, էջ 113):